ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0009, Տերյան 89, 010-52-01-23

N 42/44/8558-2021

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՏԻԿԻՆ Ս. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Հովակիմյան

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի մարտի 17-ի N /15379-2021 գրության, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 105-րդ կետի պահանջը՝ հայտնում եմ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փաստաթղթավարի (ծածկագիր՝ 41-Մ2-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի թեստավորման փուլի մասնակիցներ Լիդա Մնացականյանի և Սեմյոն Բաբայանի կողմից կոմպետենցիաներին առնչվող թեստային առաջադրանքների բողոքարկման պահանջը հարցի բովանդակության հետ առնչություն չունի, հետևաբար՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակը հարցը ճիշտ կամ սխալ համարելու վերաբերյալ որոշում չի կարող կայացնել:

Ինչ վերաբերվում է մրցույթի մասնակիցների այն պնդմանը, թե իրենք նշել են հարցի ճիշտ պատասխանը, բայց էլեկտրոնային համակարգը (այսուհետ՝ Հարթակ) պատասխանը համարել է սխալ կամ փոխել է պատասխանը, ապա տեղեկացնում եմ, որ թեստավորման ծրագրային հատվածի, այդ թվում՝ մատնանշված հարցի վերաբերյալ բազմիցս քննարկումներ են տեղի ունեցել Հարթակի ծրագրային մասն ապահովող մասնագետների հետ, Հարթակի փորձարկման փուլում թեստավորման հատվածը մանրակրկիտ, տարբեր իրավիճակների համադրմամբ փորձարկվել է և գործարկման պահից ի վեր նմանատիպ դեպք երբևիցե չի արձանագրվել:

Մրցույթի մասնակիցներ Լիդա Մնացականյանի և Սեմյոն Բաբայանի բողոքի հիման վրա մասնագետները մեկ անգամ ևս ուսումնասիրել են նշված մրցույթի թեստավորման ծրագրային մասը և հավաստիացրել, որ Հարթակի թեստավորման հատվածն աշխատում է անխափան՝ առանց թերությունների:

Հավելեմ, որ ծրագրային լուծումներով թեստն ավարտվելուց հետո, թեստային առաջադրանքը սխալ է համարվում այն դեպքում, երբ մասնակիցը նշել է սխալ պատասխան կամ **որևէ տարբերակ չի նշել**: Որևէ տարբերակ չնշելու դեպքում համակարգը պատասխանը դիտարկում է սխալ՝ միաժամանակ ցույց տալով հարցի ճիշտ պատասխանը:

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ**

Կատարող՝ Համալրման և կատարելագործման վարչություն,
հեռ.՝ 010-52-02-61: